

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мпакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՄԵՐԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Նմադրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գնացէ՛ք ինքներդ ժողովրդի մէջ.— ՆԵՐ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Գլխարկից.
Նամակ Նմադրութեան. Նամակ Նմադրու-
թեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին
լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Նամակներ Պարսկից.

ԳՆԱՅԵՔ ԻՆՔՆԵՐԴ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՋ

«Եթէ սարը չէ գալիս ինձ մօտ, ես կը
գնամ սարի մօտ». եթէ ժողովուրդը չէ
գալիս ինձ մօտ ուսանելու, ես կը գնամ
նրա մօտ նրան սովորեցնելու. եթէ գիւ-
ղացին չէ մտնում արհեստանոց նոր ար-
հեստներ սովորելու, ես կը տանեմ ար-
հեստանոցը գիւղական ազգաբնակչութեան
մօտ և ցոյց կը տամ նրա գործունէու-
թիւնը:

Այսպիսի մի ծրագիր իրագործեց նորերս
մայրաքաղաքի ընկերութիւններից մէկը.
Նա ժողովից զանազան արհեստների գոր-
ծիքներ, գիւղական շրջանի մէջ օգտա-
կար և պէտքական զանազան նիւթեր,
առաւ իր հետ վարպետների մի խումբ
և ճանապարհ ընկաւ դէպի գիւղե-
րը: Դա թէ արհեստանոց էր, թէ թան-
գարան և թէ ցուցահանդէս: Կրթական
այդ արշաւախումբը այցելեց բազմաթիւ
տեղեր, կանգ առնելով յարմարաւոր կէ-
տերում և կատար ածելով իր ծրագիրը:
Նա ցոյց էր տալիս հիւսնութեան, կաղ-
մարարութեան և կոշկարարութեան ար-
հեստների աստիճանաբար ուսուցման ե-
ղանակները, զամբիւղներ շինել յարկից
և ուրիշ նիւթերից, կարելու, գործելու,
հիւսելու արհեստը, գիւղատնտեսական մի
քանի գործիքներ, սերմեր, պարարտացնե-
լու նիւթեր և այլն: Գիւղացիներն այցե-
լում էին շրջիկ ցուցահանդէսը նախ զբոլո-
ված միայն հետաքրքրութիւնից, իսկ ապա
և ուսանելու նպատակով: Յուզահանդէս
կազմողները, բացի գործնականապէս սովո-
րեցնելուց, կազմում էին և զրոյցներ, դա-
սախտութիւններ, որոնցից մի քանիսը
գրաւի էին զարծնում մոզական պատկեր-
ներով:

Մի քանի ամսվայ ընթացքում շրջիկ
ցուցահանդէսն այցելեց մի քանի դաւառ-
ներ: Ընդամենը ցուցահանդէսն այցելեցին
14556 գիւղացիներ, զրոյցներին ներկայ ե-
ղան մինչև 2000 անձինք, ձեռագործ սովո-
րեցին 160 հոգի աղջիկներ և կանայք:
Այդ վերջինների մէջ կային և փոքրեր 7

տարեկան և պառւաններ մինչև 60 տարե-
կան, ամեն հասակի անձինք, որոնց հա-
մար արհեստը գործնական նշանակութիւն
ունէր:

Ահա ձեզ ժողովրդական դպրոցի, ժո-
ղովրդական թանգարանի, ժողովրդական
համալսարանի մի նոր նմուշ, որից կարե-
լի է օրինակ վերցնել ուրիշ տեղերի և
նրանց թուում Անդրկովկասի համար: Յի-
րաւի, կարճ միջոցում որքա՜ն մեծ շրջա-
նի ազգաբնակչութեան հետ կարելի է շփ-
վել և նրան ծանօթացնել նրա կենցաղա-
վարութեան համար պիտանի և անհրա-
ժեշտ առարկաների և արհեստների հետ:
Եթէ մի այդպիսի շրջիկ ցուցահանդէս չը
կարողանայ գործնականապէս շատ բան
հաղորդել անմիջական կերպով ժողովրդին,
նա կը զարթոնէ նրա մէջ մեծ հետաքր-
քրութիւն և առիթ կը դառնայ մի շարք
մտածումների բարեօրէնում և կատարելա-
գործելու իր տնտեսական կեանքի կար-
գելը:

Նարժական արհեստանոց-ցուցահանդէսը,
հմուտ վարպետների և դասախօսների խե-
լացի կազմակերպված խմբով, կարող է դա-
ւառում ազդել իրրեւ մի խմբի մի շարք
բարեփոխութիւններ մտնելու համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Բազուի նաւթահանքերում աշխատողների
մասին մինչև այժմ վիճակագրական ճիշդ տե-
ղեկութիւններ չը կային: Անցեալներում կազմ-
վեց մի յանձնաժողով՝ նաւթահանքերում վը-
նաւթած բանւորներին ապահովելու հարցը մը-
շակելու համար. այդ յանձնաժողովը հաւաքել
է տեղն ու տեղը հարուստ վիճակագրական
տեղեկութիւններ, որոնք մեծ հետաքրքրու-
թիւն են նաւթայանքների Մենք կը բերենք մի
քանիսը այդ տեղեկութիւններից, քանից մի
քանիսը Պետերբուրգի «Сѣвер. Курьеръ» լրա-
գրից, որը իր կողմից վերցրել է նրանց Բազ-
ուի հրատարակիչ «Нефтяное Дѣло» շաբա-
թաթերթից: Յանձնաժողովը հաւաքել է տեղե-
կութիւններ Բալխանի-Սարանիչի հանքե-
րում մշակութիւն անող եւ ծառայող 18,875
մարդկանց մասին: Այդ թիւը, ի հարկէ, միան-
գամայն բաւական է, որ բնորոշի Բազուի
նաւթայան աշխատողներ գործողների ընդհանուր
կացութիւնը:

Նաւթայան գործերի վարչութեան եւ գրա-
մենակների մէջ ծառայողներին վիճակա-
գրութիւնը դասաւորել է մէկ առանձին խմ-
բում: Այստեղ հետաքրքրական է նշանակել

այն, որ հայերը այդ խմբի մէջ գրաւում են
բացառիկ տիրապետող դերը (55,5 տոկոս).
յետոյ գալիս են ռուսները (21,5 տոկոս) եւ
այլ ոչ-կովկասցի ազգութիւնները (15 տո-
կոս). իսկ տեղական միւս ազգութիւններին
(չեզգիներին եւ թուրքներին), Կազանի թա-
թարներին եւ պարսիկներին բաժին այդ գե-
րակշռող խմբի մէջ հասնում է միայն 8
տոկոս:

Գալով բուն բանւորներին, հայերը նոյն
գերակշռող դերը պահպանում են մեքենանե-
րի մօտ աշխատելու մէջ. իսկ միւս ճիւղերում
(հորեր փորել եւ շահագործել, արհեստանոցներ
եւ աշխատանքի այլ տեսակներ) հայերը առաջ-
նութիւնը տալիս են ուրիշ ազգութիւններին:

Ինչ վերաբերում է լեզուներին, թուրքե-
րին եւ պարսիկներին,—հայերը այս աւելի
նուազ կուտուրական ազգութիւնների ներ-
կայացուցիչներն են, ինչպէս երեւում է ման-
րագրման աղիւսակներից, զիջում են միայն
այն աշխատանքը, որի մէջ պահանջվում է
միայն ֆիզիքական ոյժ, առանց որ եւ է
տեխնիկական գիտութիւնների: Սակայն ռուս-
ների գերակշռութիւնը արհեստանոցների մէջ
ցոյց է տալիս արդէն այն, որ տեղական ազ-
գաբնակչութիւնը դեռ բաւականաչափ չէ
յարմարվել գործարանական աշխատանքի
պահանջներին: Բայց այն էլ պէտք է ասել,
որ յանձնաժողովը նկատել է նշաններ, որոնք
ցոյց են տալիս, թէ մօտիկ ապագայում փո-
փոխութիւններ կը լինեն այդ խմբի մէջ.
արհեստանոցներում աշխատող 616 աշակերտ-
ներից 66 խումբը կազմում են հայերը. այս-
պիսով մի քանի տարուց յետոյ հայերը այս-
տեղ էլ ուրիշ դեր կը բռնեն, իսկ Անդր-
կովկասը կունենայ իր սեփական գործարա-
նական բանւորը՝ այս բառի եւրօպական
մտքով:

Բանւորների հասակի վերաբերմամբ հետա-
գոտութիւնը շատ ցաւալի հետեւանքների է
հասել: Բանւորների ամենահեծ թիւը (52 տո-
կոս) 20—30 տարեկան հասակումն է. կան
աշխատութեան այնպիսի ճիւղեր, որոնց մէջ
100 մարդկանցից 40 տարեկան հասակին հաս-
նում են երկու-երեք մարդուց ոչ աւել: Դա
ցոյց է տալիս, թէ բանւորական կեանքը որ-
քան սաստիկ քայքայում է մարդու առողջու-
թիւնը եւ ընդունակութիւնները: Մի բանւոր
ստանում է վարձ տարին միլիոն ռուբլի 268
ռուբլի: Աշխատանքի մի քանի ճիւղերը քիչ
աւելի բարձր են վարձատրվում, քան, օրինակ,
Մօսկվայի գործարանական շրջանում: Բայց ե-
թէ նկատի ունենանք, որ Մօսկվայի շրջանում
բանւորը գործում է տարին 276 օր, իսկ նաւ-
թահանքերում 360 օր, մենք կը տեսնենք, որ
նաւթահանքերի բանւորի գործութիւնը փայլուն
չէ: Հետաքրքրական է այն հանդամանքը, որ
բանւորի գրագիտութիւնը մեծ ազդեցութիւն
է անում վարձի վրա, այսինքն գրագետ բան-
ւորները ստանում են աւելի շատ, քան ան-
գրագետները:

Բանւորներին հարց ու փորձ անելիս նկա-
տի է առնված ոչ միայն ռուսներն զրադի-
ստութիւնը, այլ եւ արեւմտեան-եւրօպական ու
հայերէն լեզուներով գրագիտութիւնը: Մահ-
մեդական գրագիտութիւնը անտես է արված,
որովհետեւ վիճակագրութիւն կազմակերպող-
ները այն յենակէտն ունէին, որ թուրքերի
եւ պարսիկների դպրոցական եւ գրական
գործի ներկայ դրութեան մէջ գրագիտու-
թիւնը հազիւ թէ ընդունակ լինի որ եւ է
կուտուրական ներգործութիւն անել անհա-
տի վրա: Եւ պէտք է ընդունել, որ այս
հանգամանքը լուրջ հիմքեր ունի: Գոնէ վի-
ճակագրութիւնը յայտնի դարձրեց, որ նոյն
իսկ հայերէն լեզուն, որը յամենայն դէպս
աւելի կուտուրական նշանակութիւն ունի,
քան թուրքերէն եւ պարսիկէն լեզուները,
շատ հեռու է այն աստիճան ազդեցուց մար-
դու մտաւոր զարգացման վրա, ինչպէս ռու-
սերէն լեզուն. օրավարձի բարձրացնելու
վրա հայերէն լեզուի գրագիտութիւնը դա-
կանապէս ոչ մի ազդեցութիւն չէ անում:

Վիճակագրական տեղեկութիւններ հաւա-
քողների այս եզրակացութիւնները մի քիչ հա-
մարձակ եւ երեւում են թուում մեզ: Որ հայե-
րէն լեզուով գրագետ մարդը չէ կարողանում
աւելի բարձր վարձ ստանալ, քան բոլորովին
անգրագետը, դա միայն այն է ապացուցանում,
որ հայերէնագիտութիւնը ոչինչ գործնական
հանգամանք չունի նաւթային գործում, քանի
որ նոյն իսկ երկի գիւղացի դուրս եկած հայ
վաճառականն էլ ռուսների լեզուով է վարում իր
բոլոր գործերը: Ուրեմն, բնական է, որ միայն
հայերէն իմացողը նոյնպէս անգրագետ համար-
վի: Բայց որ հայերէն լեզուն այնքան ստոր
ազդեցութիւն ունենայ անհատի զարգացողու-
թեան վրա, դա—խոստովանում ենք—շատ
զգուշոր է ապացուցանել վիճակագրական
թւերով: Մենք չենք կարծում, որ բան-
ւոր մարդու պահանջներին բաւարարու-
թիւն տուող գրագիտութեան շրջանում հայե-
րէնը չը կարողանայ ապա կուտուրական եւ
կրթական աննշան պաշար: Թէեւ մեր գրակա-
նութիւնը զարգացած չէ, բայց եւ այնպէս,
հայ հասարակ ընթերցողը հայերէն գրքի մի-
ջոցով կարող է ծանօթանալ գիտութեան դա-
նազան ճիւղերի հետ, կարող է ազնուացնել
իր միտքը գեղարուեստական գրուածքների
ընթերցանութեամբ: Հայ ընթերցողի առաջ-
կայ թէեւ քիչ, բայց համեմատաբար բազմա-
կողմանի ընթերցանութեան նիւթ: Այնպէս որ
մենք չենք կարողանում հասկանալ թէ յանձ-
նաժողովը ինչ փաստերի վրա է հիմնել իր
եզրակացութիւնը հայերէն լեզուի չնչին դերի
մասին: Մենք ձեռքի տակ չունենք մասնաժո-
ղովի գործը ամբողջովին եւ, ինչպէս տեսնում
է ընթերցողը, հարկադրված ենք Բազուի մէջ
տալված մի գործի մասին տեղեկութիւններ
վերցնել մայրաքաղաքի լրագիրներից: «Неф-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐԻՋԻՑ

IX

Ամեն մի պատմական շրջան ծնում է իր յա-
տուկ, բնորոշող գրական տիպը, որը աւելի
կամ նուազ քանակութեամբ ու ուժգնու-
թեամբ կարելի է գտնել նոյն էպօքում դուրս
եկած գրական երկերում:

Արդի ֆրանսիական գեղարուեստական գրա-
կանութիւնը նոյնպէս տալիս է իր գրական
տիպը. դա ճնոր իրականութիւնն որոնող տիպն
է: Դա այն մարդն է, որի ցաւը, տանջանքը,
մղուկները առաջին հայեացքից թէեւ անձնա-
կան են, բայց որը մի եւ նոյն ժամանակ մի
ամբողջ դասակարգի, իսկ շատ դէպքերում
եւ ամբողջ մարդկութեան ցաւը, տանջանքը,
մղուկներն է արտայայտում: Այդ գրական տի-
պը կենտրոնացնում է իր մէջ ժամանակակից
հանրամարդկային ամենասարսափալ ինքիները,
ամենաբարձր յուզումները: Դրանք մարդկային
վերածնութիւնը որոնող տիպերն են:

Եւ նշմարելի փաստ է, որ մենք պատա-

նում ենք այդ տիպը գեղարուեստի բոլոր ճիւ-
ղերում եւ բոլոր ժանրերում—նկարչութեան
ու քանդակագործութեան մէջ, որպէս եւ բա-
նաստեղծութեան, վէպի եւ մանաւանդ դրա-
մայի մէջ: Ով ուշադրութեամբ հետեւում է
եւրօպական գեղարուեստական գրականու-
թեան, նա անշուշտ նկատած կը լինի, որ մարդ-
կային վերածնութիւնը փնտրող գրական տի-
պը, զանազան ձեւերի տակ, աւելի կամ պա-
կաս ոյժով սկսել է երեւալ եւ Ֆրանսիայում,
Գերմանիայում եւ Անգլիայում եւ մինչև իսկ
սլաւոնական ազգերի մօտ, ինչպէս լեհական եւ
ռուսաց գրականութեան մէջ: Այստեղ ուժգին
են ըմբոստ, այնտեղ աւելի թույլ արտայայտու-
թեամբ. մի տեղ հարցը ուղղակի դրված է իր
կենսական յատակագծի վրա, միւս տեղը՝ քո-
ղարկված բարոյական կամ մինչև իսկ կրօ-
նական գաղափարներով, բայց ամեն տեղ այդ
գրական երկերում դուր կը պատահէ ճնոր
իրականութիւնն որոնողներին:

Այդ տարածվող գրական ուղղութիւնը կա-
րելի է բնորոշել «սօցիալական» անունով—«սո-
ցիալական վէպ», «սօցիալական դրամա» եւ
այլն:

Ընդունված է նրանց սօցիալական անունը
տալ, որովհետեւ մի կողմից նրանք նկարագ-

րում են ժամանակակից հասարակութեան բո-
լոր բացասական կողմերը, տիրող բեփմի խա-
խուտ հիւսքերը, մարդկային կեանքի հակասու-
թիւնները. իսկ միւս կողմից՝ նոր հասարա-
կութեան կարելիութիւնը, նոր հասարակական
կարգերի պահանջը, անհրաժեշտութիւնը եւ
կեանքի նոր յարաբերութիւնները:

Սօցիալական վէպը կամ դրաման, ընդունե-
լով մինչև մի յայտնի աստիճան նատուրալիզ-
մի մեթօդը, նրանով, սակայն, չէ բաւականա-
նում: Իրականութիւնը ճիշդ նկարագրելուց յե-
տոյ՝ նա քննադատութեամբ է վերաբերվում
դէպի այդ իրականութիւնը: Աւելի եւս. նա
այնպիսի հոգեբանական գրութիւններ, այնպիսի
արամադրութիւն եւ բարոյական մղումներ է
առաջ բերում, որոնց չնչից արդէն ինքն ըստ
ինքեան պարզվում է, թէ ինչ ճնոր իրակա-
նութիւնն ծնունդ է առնում փչնող հասարա-
կական կարգերի տակից:

Այս տեսակէտից նայած, կարելի է ասել,
որ նախկին մերկ «գիտական» կոչված նա-
տուրալիզմը իր հօր ձեռքով (Զօլայի վերջին
վէպերով) ընդ միշտ հրաժարվեց իր մեթօդից:
Գեղարուեստական գրականութիւնը դարձաւ
նատուրալիստ—գաղափարական. այժմ էլ նա
իրականութիւն է մեզ տալիս, բայց մի իրա-

կանութիւն, որ ստացած չէ, այլ դիմում է դէպի
նոր կեանքը, որովհետեւ նա զգու՜ է իրանից,
նա չէ բաւականանում լոկ իր մերկ պատկե-
րով...

Ժամանակակից Ֆրանսիան իր շատ կէտե-
րում այնպիսի ապաւորութիւն է թողնում
մարդու վրա, որ կարծես լանցեալ տասնեւու-
թերորդ դարի վերջերը պատրաստ են կրկնվե-
լու: Այսօր էլ, ինչպէս մեծ յեղափոխութիւնից
առաջ, ֆրանսիական հասարակութեան մի մա-
ւը փոխ է, այսօր էլ, ինչպէս անցեալ դա-
րում, այս մասը մտնում, իսկ միւս մասը նոր
ծնունդ է առնում: Եւ դեռ երիտասարդ, դեռ
բոլոր ոյժերը չը հաւաքած՝ այդ նոր, ծնունդ
առնող Ֆրանսիան մի անողք կուի է յայտա-
բարել ֆրանսիական բոլոր տիրող, բայց ար-
դէն իր բնական ծանրութեան տակ տապալկող
հասարակական կարգերի դէմ: Արդի ֆրան-
սիական գրականութիւնն էլ, որ իր ժամանա-
կակից կեանքի աղբիւրիցն է յաղեցնում իր
գեղարուեստական ծարաւը, քանի գնում փո-
թորակից կերպարանք է ստանում: Նա ու-
ղում է դառնալ հանրամարդկային, ուղում է
ընդգրկել մարդկային կեանքի բոլոր կողմերը,
նա ուղում է քննութեան նմաբոկել հասարա-
կական կարգերը—անտեսական եւ քաղաքական

ТАНОЕ ДѢЛО» չարախաղերի խմբագրութիւնը չէ բարեհաճում ուղարկել մեզ իր հրատարակութիւնը, թէեւ ստանում է մեր կողմից «Մըշակ» փոխանակութեան համար—մի հանգամանք, որ յամենայն դէպս, լաւ պատկերացնում է մեր կողմանեան կուլտուրական հասկացողութիւնները:

ՆԱՄԱԿ ԶԱՂԱՐԻՑ

Յունիսի 2-ին

Հեռագիրն արդէն հաղորդեց ձեզ. որ թեւեւ դեռ ամբողջով չէր զգալով հեղեղից Ղզլաբ քաղաքի և այգիների մի փոքր մասը ու փակեց հաղորդակցութեան ճանապարհը: Երկու շաբաթ մեր քաղաքում պոստ չէր ստացվում, բայց ջուրը չուտով քաշվեց և քաղաքին չը վնասեց:

Թերեքի բաղնիքային հեղեղումները ամեն տարի վտանգ են սպառնում քաղաքի և այգիների մի մասին. այդ հեղեղների պատճառով թիւերը շատ հին է և պարբերաբար կրկնված 1840 թվուց: Թերեքի աղմուկ և պղտոր ջուրը տարիների ընթացքում այնպէս է բարձրացրել նրա գետաբերանը ու յատակը, որ յատակի բարձրութիւնը տեղ-տեղ հաւասար է քաղաքի մակերեսովի բարձրութեանը: Հապա՛մնայէս ջուրը չէ հեղեղում քաղաքը: Քաղաքի մօտ թերեքի ջուրը պահպանում է արհեստական բարձր հողէ թմբերով 10—15 վերստ երկարութեամբ, որոնց վրա տարիների ընթացքում հարիւր հազարներ են ծախվել ու այժմ էլ ծախվում են:

Ի հարկէ պարզ է, որ բնական օրէնքը մաշակի անգամ խախտել անկարելի է և ջուրը կանխելով այդ հարկը հազարները ու բանդներով թմբերը քաղաքի մօտով մի նոր ընթացք պիտի ստանայ: Բայց ինչպէս անել այդ կատաղի տարերքի առաջը, ահա հարց, որը այժմ զբաղեցնում է զղարկների միտքը: Ղզլաբ իր չըջակայքով յայտնի է իր ճոխ և հաղուսազիւս բուսականութեամբ, բայց միւս կողմից թերեքի առաջացած ճահճները Ղզլաբի օդը ապականել և տնդի (malaria) բուռն են դարձրել: Այժմ զղարկների մեծածառնութիւնը հակված է այն եղրակացութեան, որ թերեքը մի պատուհաս է Ղզլաբի և չըջակայքի համար և որից պաշտպանել ոչ մի գոհաբերութիւն չէ պահանջում, որովհետեւ Ղզլաբը իր ճոխ բուսականութեան պատճառով անձրեւային կլիմա ունի:

Իսկ թերեքից ազատվել կարելի է միմիայն նրան տալով այն նոր ընթացքը, որը կոչվում է Չորոթիլու և որով մօտ 45—50 տարի առաջ հասում էր թերեքի մի մասը և որը յետոյ փակեցին Չորոթիլուն քաղաքից 40 վերստ հեռու է և նրան նորից բաց անելը Բարձրագոյն հրամանով միայն կարող է վճարվի:

Եթէ իրագործվեց զղարկների այս տեսչանքը, այն ժամանակ Ղզլաբը անսեռնապէս կը վերածնվի և իր բարեկաւած կլիմայով, որպէս երկրորդ Դրիմը՝ խաղողագործական կուլտուր կը դառնայ: Խ. Շաթիրեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ալեքսանդրապոլ, յունիսի 1-ին

Ունարհաբար խնդրում եմ տեղ տալ այս մի քանի տողին «Մըշակ» մէջ:

—Եւ այդպիսով ցոյց է տալիս ներկայ որոնող մտքին նոր կեանք, նոր մարդկութիւն: Եւ իր ոյժով, իր կորովով ինչ նման է նա փոթորկալից ծովին, որ իր վսեմական ներհինգ սթափված՝ պատրաստ է ողջ բնութիւնը գրկել: Բայց սօցիալական զբաղանդութիւնը, որպէս նաեւ հանգարտած ծովն էլ, ընդունակ է նոր հօրիզոններ ցոյց տալու: Այլ նորաց, ի հարկէ, թէ՛ հրքան մինչեւ այժմ երեւացող սօցիալական վէպը կամ զբաման կարողացել է իր շօշափած կեանքի յատակագիծը ճշգրտէն պարզել: Այլ հարց է թէ՛ սրբան այդտեղ բաժանորդական երեւակայութիւնը ի վնաս գիտութեան է դեր խաղում: Ընդգրկելով հասարակական կեանքի բազմակողմանի երեւոյթները, սկսած ազատ սէրից և վերջացնելով աշխատանքի պայմաններով, նա շատ անգամ չէ կարող չարեքի իսկական դրդիչ պատճառները դնել: Եւ տեսէ՛ք թէ՛ կեանքի ներդաշնակութիւնը որոնելով ինչպիսի հարցեր միայն չէ չօշափում փրօնախաղի արդի գրականութիւնը: Մի տեղ, օրինակ, բոսանիստը կարծում է, որ անտեսական անհաւասարութեան պատճառները և նրանից առաջացած դժբաղդութիւնները մարդկանց չար կամքի մէջն են գտնվում: Մի ուրիշ հեղինակ, թատերական գրող, ներկայացնում է մեզ միլիտարիզմը և

«Մշակ» № 98-ում, «Մամուլ» վերնագրով յօդուածի մէջ կարգադրեց. «Վենետիկի «Բազմավէպ» ամսագիրը մի շատ տաք բանական էր սկսել էլ միաժամին անհնորձ աստուածաբանների հետ՝ միաբնակութեան և երկարակյութեան մասին: Մի խիթարեան հայերը, իրանց պաշտօնական ամսագրի մէջ, դատապարտելով հայրենի, որ նրանք յամառ կերպով միաբնակութեան են կպած, մի օմն Շիրակեցու բերանով ասում էին. «Իսկ թէ նա (այսինքն հայոց եկեղեցին) կզգիայած մնայով ինչ փաստըկեցաւ...» և այլն: Թող տուէ՛ք հրապարակով յայտնել, որ արդէն 20 տարի է, որ ես գրում եմ «Մշակ» մէջ Շիրակեցի աստուածաբանութեամբ, բայց «Բազմավէպ» ամսագրի մէջ կանխումն ոչ մի տող չեմ գրել և առհասարակ կրօնական վէճերը, իմ խորին համոզմունքով, համարում եմ ապարդիւն և ֆեւսակար:

Մեր նախնիները, շատ դառն փորձերից յետոյ, համոզվեցին, որ կրօնական վէճերը մեզ շատ սոսկալի փիճակի հասցրին: Թողնենք տրիստը և արինոտ անցնելը, Զաքարիայ պատրիարքի և Հասունի յուդայական գործերը, որոնք մեր խեղճ ազգի մէջ սաստնայի որո՞մ ջանքերն են հարազատ եղբայրներին մէջ մէկու դէմ գրկելիս: ամբողջ իրար միս էր ուտում, իսկ կղերք հաճում, ծիծաղում էր... Տներ, հոգակալ տո՛մեր ճանկանում էին և ոսկին լցվում էր թիւրք փաշաների բայն ու անյատակ գրպանների: Այն, ոչ կղերք դադարեց որով ցանկնուց և ոչ թիւրքը կաշառք անունը, իսկ սոսկալի, անանկազող մեր խեղճ ազգն էր... Սոքմ գոնէ հառկանքը, իբրեւ մարդ՝ մաքուր պէս ապրելով, իբրեւ եղբայր՝ կղերք պէս սիրով և համբարախոթեամբ ապրելով: Փրկիչը քաղաքից ոչ թէ ատելութիւն, կոխ, այլ սէր: Մեր փրկութիւնը սիրոյ և համբարախոթեան մէջ է:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 7 յունիսի

Մենք, Բրդեան գիւղի հասարակութեան պատգամաւորներս, մեր հասարակութեան կողմից, սրանով յայտնում ենք մեր խորին չնորհակալութիւնը բոլոր այն անձանց, որոնք իրանց նուէրներով օգնել են մեր գիւղին: Այդ նուէրները ստացվել են Բարձրագոյն գիւղի ծխատէր Մեսրոպ քահանայ էպիսկոպոսի միջոցով, որը հրապարակ հանելով մեր գիւղացիների թշուառութիւնը և սովը, օգնել է ժողովրդին նուէրներ և բաժանելու հայ ու փոք կարծող գիւղացիներին: Այդպիսի ժողովարարութեամբ նաեւ աշողվել նորոգել մեր եկեղեցու չինութիւնը, որի համար մինչեւ յունիսի 1-ը ժողովվել և յանձնվել է եկեղեցու չինութեան հոգաբարձուներին 260 ռուբլի: Այդ գումարը գործադրվել է եկեղեցու պատերի և ծածկի վրա. իսկ եկեղեցին աւարտելու համար դեռ եւս հարկւում է 200—300 ռուբլի, որի համար, լիայոյս ենք, կը գտնվեն բարեխիտ անձինք և կօչնեն մեզ:

Բրդեան գիւղի պատգամաւորներ՝ Սարգիսի Սրբոյնեանց Խաչատուր Փաշինեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՆ

«Արարատ» ամսագրի մէջ տպված է հետեւեալ պաշտօնական ազգը. «Նորին Սրբութեան Վեհափառ Հայրապետի հրամանաւ յայտնվում է ի գիտութիւն հասարակաց, որ ձեռնարանում առաջիկայ ևստմանական չըջանի համար աշակերտաց ընդունելութիւն ամենեւին չի լինի»:

Մեզ հաղորդում են, որ երկրագործութեան

կամ պարլամենտիդքը իբրեւ հասարակական արժանատի չարիքներ. տեսնում էք, օրինակ, գործներ, որոնք ինտելիգենտի բարոյական ճգնաժամը պատրաստ են տեսնել համալսարանական թերի կրթութեան մէջ. կամ եթէ մի հասարակութիւն հիւանդ է, տկար է,—ահա ինչէպով է տրվում «ճանք» և բազմապէս կոչվում: Մի խօսքով, ամեն մի հեղինակ, ճշգրէն նկարագրելով բարոյական դրութիւնը, ըստ իր հասկացողութեան է վճռում հարցերը և շատ անգամ ծառի ճիւղերից չէ տեսնում ծառի արմատը *):

Բայց բնորոշ և ամենազգլխաւորն այն է, որ հարցերն այնպէս են դրված, որ անհատական ցուել կամ ուրախութեան տակ դուք տեսնում էք մի ամբողջ դասակարգի հաւաքական ցուել կամ ուրախութիւնը. և, յիշաւի,

*) Բաւական է լինել այստեղ վերջին մի քանի տարիների ընթացքում հրատարակված վէպերը և դրամաները, եւ ընթերցողը կը տեսնէ, որ մեր խօսքերում չափաւորեցողութիւն չը կայ: Վեր առէ՛ք Բարբէսի «Արմատակները», Եկարի «Երեւնայի օդին»: Կլէմանտի «Ամենատեղեկներ», Բոնիկի «Երկաթաբալլը», Զօլայի «Յարկը», «Եկեղեցու թիւրքները», և կամ խաղաղված դրամաներից Սերբի «Եւստ հովիտները», Գեկիւրի «Ճապարակ», Զաքարի «Եւստիսի», Կեր-հարէնի, Սոթիկի «Եկեղեցի» և վերջապէս Դր Դոսնէի «Վերջերքը» և այլն և այլն:

մինիստրի օգնական Ստեփան Եսերկայ յունիսի ամսին կայցելի Անդրկովկաս Մինիստրի օգնականին սպասում են յունիսի 15-ից յետոյ:

Մեզ հաղորդում են, որ երգիչ Ա. Ե. Զ. ան, որը ձեռնով ընթացքում երգում էր Պերմ քաղաքի օպերային խմբի մէջ, առաջիկայ ձեռքը պէտք է երգէ Սերբիի Իրկուտսկ քաղաքում: Ամիրջանի թէ անցեալ և ներկայ տարվայ մասնակցութիւնը գաւառական թատրոններում համարվում է իբրեւ արձակուրդ, որ նա ստացել է Մոսկվայի Կապսերական թատրոնի վարչութիւնից: Իրկուտսկից վերադառնալով, Ամիրջան պէտք է մնայ Մոսկվայում Կապսերական թատրոնի խմբի մէջ:

«Արարատ» մէջ կարդում ենք. «Գարնանը քաղցիւրան հետ սկսվեցաւ նաեւ օտարազգի հիւրերի երթևեկութիւնը. պէտք է ներթափանցի, որ երկաթուղու մօտենալու հետ կը բազմանան նաեւ նոյա այցելութիւնները ու էլ միաժամին Այդ այցելութիւնից պէտք է յիշել առանձնապէս Փրանսիացի պ. Բօնէնին, որ Միջին Ասիայում հնագիտական հետազոտութիւններ կատարող Փրանսիական յանձնաժողովի պարագլուխ է և վերադառնալով այնտեղից Մայր Աթոռ այցելեց ամսոյս 7-ին իւր հայրենակից պարոն և Երկրի Պրիմէրների հետ Յարգելի գիտնականը գլխաւոր նպատակ է ունեցել գտնել այն բոլոր հետքերը, որ թողել են նեոտորականները քրիստոնէական առաքելութիւնը տարածելու միջոցով: Միջին Ասիայի և Չինաստանի խորքերը նրա հետազոտութիւններից երեւում է, որ այդ քարոզիչների թիւում եղել են նաեւ շատ հայեր, և նեոտորականների ամենահետադարձ գաղթականներից մէկում: Մանդրիայի և Չինաստանի սահմանի վրա, Սինիքի և Ծանց—Կարի մէջ՝ Տուպա—Չէլց (Տուպա պարսպապատ քաղաք) կողմում տեղում մինչև վերջին տարիներս եղել են հայ գաղթականներ, որոնց 1894-թվին տեսել է ամերիկացի մի ճանապարհորդ, այժմ հիւպատոս Յունաստանում: Բայց 1895 թվին տեղական մասնագիտական խումբի թիւում յարուցանելով այդտեղ կործանել են ընտելեցների կոտորել են, այնպէս որ պ. Բօնէն նոյն տեղն այցելելիս միայն աւերակներ է տեսել և ոչ մի կենդանի հետք չէ գտել: Եւ կարծում է, որ այդ հայերն անպատճառ հին գաղթականութեան մնացորդներ պէտք է լինեն և ոչ պարսկա—հնդկական գաղթականութեան մի շատաւոր, որովհետեւ նոյա կարող են այստեղ հասած լինել միայն այն միակ ճանապարհով, որով անցել են նեոտորական քարոզիչները: Հնգկաստանից այդտեղ գալ անհնարին էր—Հայերն ունեցել են ի միջի այլոյ, շատ հին ժամանակներում արդէն (Ը—Ժ. Դար), մի նշանաւոր վանք իսրիկ—Կուլ լճի հիւսիսային կողմում, որ գրանցվում է ուսումնական առանձնագրի մօտ Այդ վանքում ըստ աւանդութեան պահվում էր Մատթէոս առաքելի մարմինը, և այդտեղի հաստատված քրիստոնէական առաքելութիւնն այն մեծ նշանակութիւն ունի, որ նա չի ունի յայտնվել բերել քրիստոնէութեան և բողոքականութեան մէջ և այդ չի ման քրիստոնէութեան եղել է լատինական կրօնը, որ էութեամբ նոյն բողոքականութիւնը լինելով, բազմաթիւ ծէսեր և արարողութիւններ է փոխ առել քրիստոնէութեան:

Հրանում է սօցիալական կողմում զբամաների կամ վէպերի բնորոշ կողմը, որ հերոսները իրանց անձնական ցուելի միջից ուզում են ցոյց տալ վերածնութեան ճանապարհը ամբողջ մարդկութեան: Մի բան, որ նոյնպէս չէ կարող աչքի չընկնել այդ գրականութեան մէջ՝ ներկայացված մարդկանց վրէժ և մեծ նպատակները և մի և նոյն ժամանակ ստացված չնչին հետեւանքներն են: Եւ չը նայած, որ շատ անգամ նրանք լուրջ գում են իրանց անկարողութիւնը, իրանց լուրջ լատված ոյժերը, բայց և երբեք ցոյց չեն տալիս, որ հիւսթափված են իրանց գաղափարից: Հետեւապէս սօցիալական ոգով դրած գեղարուեստական երկերում պիտիմիզմը չէ էլ կարող տեղի ունենալ: Ինչպիսի հոգեբանական ճշգրտութեամբ է գոյութիւն ունեցող սօցիալական կոխը այդտեղ, որպէս հայելու մէջ, անդրադարձել իր բնորոշ յատկութիւնները: Եւ իսկապէս միջի աշխատաւոր ընդհանրութեան բանւոր դասակարգի օպտիմիզմը: Թող թէ այդ կոխը սուր և ծանր չըջաններ ունենայ, թող թէ աշխատաւոր ընդհանրութիւնը մի շարք անաղղութիւնների ենթարկվի, բայց և այնպէս՝ նա համոզված է, որ ապագան իրանն է: Նա գիտակցորէն է վերաբերվում այդ ժամանակ:

Հրանում են սօցիալական վէպերում գործող հերոսների անհանգիստ ոգին, տեսնում են ինչպէս նրանք մղվելով դէպի աւելի լաւ կեանքը տարալուծում են իրականութիւնը, կուռում են իրականութեան խոչնդոտները դէմ, կուռում են կանաչից և մարդկանցից բարոյական պարտութիւններ, բայց տեսնում են, որ և ոչ մէկը նրանցից զէնքը չէ թողնում իր ձեռքից: Մինչեւ իսկ շատ անգամ նրանք աչքով տեսնում են, որ իրանց գործունէութեան միջոցները ապարդիւն են, բայց այդ դէպքում եւս նրանք չեն ուզում ցոյց տալ իրանց հիւսթափութիւնը: Եկեղեցի սերունդը կը շարունակէ մեր գործնական զբոսը ևս պատրաստում, ինչպէս արդէն տեսնում ենք «Վերջերք» թատրոնական պիէսայում, որի մասին խօսք կը լինի մի այլ անգամ:

Եւ, ի հարկէ, անհրաժեշտ էլ այն է մեր կեանքում, որ անկարգ, անհաւ, մտայն իրականութեան պրիզմայի միջից մարդ կարողանայ նշմարել, որ ապագան դարձեալ աւելի լաւ է: Եւ որ շնոր իրականութեան ստղծներ արդէն կան և ծնունդ են առել: Բ. Բ.

տոնէութիւնից, Լատինական կրօնի ամբողջ արտաքինը այնպիսի նման է քրիստոնէական եկեղեցուն, որ երբ այս կողմերն առաջին անգամ այցելած մի լազարիստ կրօնաւոր իւր ճանապարհորդութիւնն ու ապաւորութիւնները մի գրքով միաստաբար նկարագրեց՝ նորա գիրքը արդիւնալ գրքերի ցանկի մէջ անցաւ, ուրովհետեւ պապականները վախենում էին, թէ հեթանոսական կրօնի անչափ մեծ նմանութիւնը կաթոլիկ եկեղեցու կարգերի հետ անտեղի կասկածներ կը յարուցանէ: Այժմ յայտնվում է ուրեմն, որ այդպիսի կասկածի տեղիք չը կայ ամենեւին. բողոքականութիւնն սկզբում ոչ մի ծէս չուներ, բառի բուն իմաստով կրօն իսկ չէր, այլ մի վերացական բարոյագիտական աշխարհայեցողութիւն, որ զանազան կրօնների հետ չի փոխվում, մի տեղ բազմաստուածեան, միւս տեղ միաստուածեան կրօնի կերպարանք առաւ: Լատինական կրօնի հիմնադիրը ընդի տիբէթցի, լաւ հասակացել էր որ բողոքականութիւնը չէ կարելի մատչելի անել ժողովրդին առանց արտաքին կարգեր մտցնելու: Նրա մէջ, և ահա այդ կարգերը նա վերցրեց քրիստոնէութիւնից, որին ծանօթացել էր մի-յեւալ լճի մօտերը մի ճանապարհորդութեան միջոցին: Հայոց վանքը, ինչպէս և Միջին Ասիայ քրիստոնէութեան գրեթէ ամբողջ կազմածը կործանվեցաւ և անյայտացաւ ամենայն հասակականութեամբ: Լէնկ-Թէմուրի աշխարհաւէր արշաւանքների ժամանակ:

ՂՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Հայ չը կայ չուկայում, —ահա օրվայ հարցը, որը շատ է զբաղեցնում մարդկանց: Ղուբայի հացաւատ գաւառը, որն իր հարուստ բուսականութեամբ առաջին տեղն է գրաւում Բագուի ամբողջ նահանգի մէջ, դուռն է այժմ հայի կարօտութիւն: Շատ ցուաւոր է տեսնել, երբ սայլերով ձիաներով, տաղալիներով՝ տասնեակ գիւղացիներ գալիս են քաղաք և յուսահատ դէմքերով դիմում են մէկի և միւսի խանութը: Գործի, կորելի, գարի գնելու համար: Բայց քաղաքում էլ չը կայ հացահատիկ: Թուրքերը ստիպված են չըջել քաղաքից քաղաք և Գործի, Ներից, Արմավիրից, Մոզդուլից, Աստարանից ալիւր են բերել, որը գառն համ ունի: Շատ գիւղացիներ դիմելին գաւառապետին, խնդրելով, որ պահեստների շտեմարաններից նրանց ապակի բաց թողնեն ցորեն, գարի: Նրանցից քանիները հաւատացնում են, որ հայ չը լինելու պատճառով—կանաչեղնում են ձեռքը դնում: Ամբողջ մայիսը յորդառատ անձրեւներ են գալիս՝ յաճախակի որոտմունքներով: Ասում են, բուսականութեանը անձրեւները դժբաղդաբար կը վնասեն: Ծորների ցանքները, որոնք հասնելու մօտ են, կուպել են, կը փչանան, արեւի երեւոյն կարօտ ենք:»

ՂԱՄԱՐԼՈՒ գիւղից մեզ գրում են. «Մայիսի 31-ին, չնորհի տեղիս երկու դարոցների ուսուցիչների աշակերտական-գրականական երեկոյթ եղաւ: Ս. Գալոյի դահլիճում: Երեկոյթին ներկայ էին Երկրիներ և օրիորդներ: Կարգադրեցին ուսուցիչներ և հայերին ուսանաւորներ, արձակ յօդուածներ, երգերին խմբով երգել ուսուցիչներ և հայերն և վերջում արդիւնք «Ուշիկի թուղ» կատակերգութիւնը: Դերակատարներն էին աշակերտները, աշակերտու-

նակաւոր, անցողակի պարտութիւններին, որի բովից միայն անցնելով, նա կը հասնի իր նը պատակին:

Տեսնում են սօցիալական վէպերում գործող հերոսների անհանգիստ ոգին, տեսնում են ինչպէս նրանք մղվելով դէպի աւելի լաւ կեանքը տարալուծում են իրականութիւնը, կուռում են իրականութեան խոչնդոտները դէմ, կուռում են կանաչից և մարդկանցից բարոյական պարտութիւններ, բայց տեսնում են, որ և ոչ մէկը նրանցից զէնքը չէ թողնում իր ձեռքից: Մինչեւ իսկ շատ անգամ նրանք աչքով տեսնում են, որ իրանց գործունէութեան միջոցները ապարդիւն են, բայց այդ դէպքում եւս նրանք չեն ուզում ցոյց տալ իրանց հիւսթափութիւնը: Եկեղեցի սերունդը կը շարունակէ մեր գործնական զբոսը ևս պատրաստում, ինչպէս արդէն տեսնում ենք «Վերջերք» թատրոնական պիէսայում, որի մասին խօսք կը լինի մի այլ անգամ:

Եւ, ի հարկէ, անհրաժեշտ էլ այն է մեր կեանքում, որ անկարգ, անհաւ, մտայն իրականութեան պրիզմայի միջից մարդ կարողանայ նշմարել, որ ապագան դարձեալ աւելի լաւ է: Եւ որ շնոր իրականութեան ստղծներ արդէն կան և ծնունդ են առել: Բ. Բ.

բերականության փոխ-ծովագետը ոչինչ տեղեկություն չէ ստացել հրամանատար ծովագետի Տեղապետի վերադառնալու մասին: Այդ լուրը հերքվում է երեկ ետպոստական մարտանավի բերած տեղեկությունները՝ ծովագետի վերադառնալու մասին:

Կ. ՊՈԼԻՍ. Չմիմիայում ժամատարով հիւանդանոցում երկու դեպքեր եղան հայերի եւ յոյների մէջ:

ՀՕՆԴՕՆ. Մինչեւ այժմ ծովային վարչութիւնը չէ ստացել այն լուրի հաստատութիւնը, որ իւր թէ Տակուի մարտիկների դէմ գործած յարձակումը ժամանակ երկու անգլիական մարտանավեր ջրատնոց են արվում: Այսուհետ այդ լուրը անհիմն են համարում: Ներկայումս Պորտլանդում գտնվող անգլիական «Դիւրիս» եւ «Պուրիս» նուէրը հրաման ստացան գնալ Չինաստան:

ՊԱՐԻՉ. Ֆրանսիական զինված ուժերը, որոնք գտնվում են Չինաստանում եւ ուղարկվում են այնտեղ են պիտի համեն Տակու յունիսի 25-ից մինչեւ յունիսի 3-ը, կը կազմեն երկու հազար մարդ, իսկ այն զորքերը, որոնք կուղարկվեն Ֆրանսիայից յունիսի 29-ին երկու փոխադրական նաւերով, հաշւում են 2200 մարդ այժմ պատրաստված նաւատորմի հետ, որը կը ճանաչարձնէ ինչպէս յունիսի 29-ին: Ֆրանսիական չինական ջրերում կունենայ 7 մարտանաւ, մի համբաւատար նաւ եւ չորս զբոսերազմական մակոյթներ:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱՆԻՍԻՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱՌՈՒՂԻ

(Ժամերը Պետերբուրգի հաշուով)
տարբերութիւնը 58 րոպէ:

№ 5 զննցք: № 3 զննցք:

Բաղուից դուրս է գալիս	յեր. 4 ժ. 1 ր. 47 ժ. 11 ժ. 29 ր.
Թիֆլիսի հասնում	առ. 8 ժ 53 ժ. 5 ր. 5 ժ 34 ժ.
Թիֆլիսից դուրս է գալիս	» 9 ժ 32 ժ. 6 ր. 6 ժ 34 ժ.
Բաթումի հասնում	եր. 9 ժ 1 առ. 7 ժ 14 ժ.

№ 6 զննցք: № 4 զննցք:

Բաթումից դուրս է գալիս	առ. 7 ժ. 50 ր. 7 ժ. 59 ր.
Թիֆլիսի հասնում	եր. 7 ժ 15 ժ. առ. 8 ժ 42 ժ.
Թիֆլիսից դուրս է գալիս	» 7 ժ 18 ժ. » 10 ժ 05 ժ.
Բաղուի հասնում	յեր. 12 ժ 10 ժ. » 5 ժ 16 ժ.

առաջ զննցք

Թիֆլիսից դուրս է գալիս	» 11 ժ. 19 ր.
Բաթումի հասնում	» 9 ժ 41 ժ.
Բաթումից դուրս է գալիս	» 9 ժ 18 ժ.
Թիֆլիսի հասնում	» առ. 9 ժ 30 ժ.

Թիֆլիսից դեպի Կարս դուրս է գալիս	երեկ. 9 ժ. —
Ալեքսանդրապոլ հասնում	» առ. 7 ժ 46 ր.
Կարս հասնում	» 9 ժ. 56 ժ.
Կարսից դուրս է գալիս	» 9 ժ. 3 ժ. 29 ժ.
Ալեքսանդրապոլից դուրս է գալիս	երեկ. 8 ժ. 35 ժ.
Թիֆլիսի հասնում	» առ. 7 ժ 15 ժ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՆՆԱՐԻ ՀԻՄՆԻՄԱՆՈՑ

Բ. ՆԱԻՍԱՆԻՅԱՆԻ

(Կուրիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
ա մ ե գ ո Ր. բ ա ճ ի կ ի ռ ա կ ի օ Ր Ե Ր Գ:
Ա Ռ Ա Ռ Ո Տ Ն Ե Ր Ը

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վերաբուժութեան, վնասական (սիֆիլիս) եւ միզաժեռ. հիւանդ.
Կ. Մ. Ձիկովանի—9—10 ժ. աչքի, ներքին եւ նեարային չ.

Չ. Բ. Բարանսեան—11—12 ժ. կանանց եւ երեխայից հիւանդ.

Կ. Բ. Չիկովանի—12 1/2—1 1/2 ժ. տկանջի, կոկորդի եւ քթի չ.

Ա. Պ. Կարապետեան—1—1 1/2 ժ. ներքին եւ երեխայից չ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Բ. Ա. Նաւասարդեան—1 1/2—8 ժ.
Վճար 50 կ. չբարենբը ճրի. Համալսարնի (կոնսիլիում) եւ օպերացիայի համար առանձին:
Օ. Տ. Առվանդեանի—առանձին, ծաղկահատ եւ բժշկական մարմնամարդ. զինվ. 11—1 ժ.:
Հիւանդանոցի վերանորոգ.
Բժեկական ԵՄԱՍԱՐԴԵԱՆ.

Մի հայ օրերոյ, որ աւարտել է միջնակարգ դպրոցում եւ պաշտօն է վարել երկար տարիներ հայ դպրոցներում եւ ընտանիքներում, ցանկանում է հայ ընտանիքում դասեր կանգնել ամառանոցում:

Հասցեն՝ Էմանուէլի գրադարան, Вельяминовская ул. 5—5

ՎԱՅԱՎՈՒՄ ԵՆ

Յ. ՍՕԼՕՎԵԱՆԻ

ՀԿՈՏՐԱՎՈՒՄ ՍԻՐՏՏ, ՎԵՐ, ԿԻՐԸ. . . 40 կոպ.

ՀՕՆԱՂԱՂՈՒՄ ՄՆԱՑ՝ փոքրիկ, գ. 20 »

Դիմել թիֆլիսի Կենտրոնական գրադարանային, կամ՝ Астрахань, учителю Акиму Соловьянцу. 3—8

ՄԱՏԻՆԵԱՆԻ ԷԿԻՊԱՃՆԵՐԸ

գնում են Բելի-Կիւլ ժամի 6-ին (Պետիկ, քաղաքային) Բելի-Կիւլի: Կառավարիչ Ս. Դանիւլան:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

այս 1900 թ.ի յունիսի 20-ին, ցերեկվայ 12 ժամին, փոխարէն չը կայացած աճուրդի, նշանակված է նոր աճուրդ՝ կապալով տարւ. 9-րդ քաղաքամասում, Նիկոլայեւսկայա հրապարակի վրա գտնվող քաղաքային կենտրոնից ստացվող տուրքը: Ցանկացողները կարող են քննել պայմանները վարչութեան 4-րդ բաժնում, բոլոր լի օրերը, ցերեկվայ 8 ժամից մինչեւ 1 ժամը: 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

այս 1900 թ.ի յունիսի 15-ին, ցերեկվայ ժամը 12-ին, նշանակված է աճուրդ կապալով տարւ. քաղաքային բուդկաները՝ լիմոնայ ծախելու համար: Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են պայմանագիրը տեսնել վարչութեան 4-րդ բաժնում բոլոր լի օրերը, ժամը 9-ից մինչեւ 1-ը: 1—3



ԲԱՐԵԳՈՐԾ եւ օգործախոր մարդկանց ու շաքորթիւնը հրաւիրվում է մի զարգացած, միջին տարիքով հիւանդի վրա, որի սոսկալի վիճակը զրիւր տնոց է գտնվում՝ նկարագրելու: Հիւանդը բոլորովին անտէր է, անօգնական եւ գործի կենսական անհրաժեշտ պայմաններին: Մօտ տարբ տարի է տանջվում է ջգային ցաւերով եւ անդամաւործութեամբ, հիւանդը իր ժամանակին գործող եւ պիտանի մարդ է եղել, այժմ բոլորովին դուրս է հնարաւորութիւնից իր աշխատանքով կերակրվելու եւ դեղորայք անելու իր աշխատանքով: Դրժ-բաղդը, աշխարհի ամեն տեսակ բուսականութիւններից զրկված, գիտում է դէպի բարեւիրտ եւ օգործած անձանց եւ պաղատագին ինդրում է ապ նրան միջոց ապրուստի եւ իր խղճալի գոյութիւնը ապահովել:

Հասցեն՝ Тифлисъ, музыкальный магазинъ Сузанаджяна. Эриванская площадь. 2—2

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿԻՑ

այս կը տեսնի մինչեւ յունիսի 15-ը, ոչ ուշ, Ախալքալաքի աղէտը մի քանի պատկերներով, Ախալքալաքի աւերումը 23 ֆոտոսի պատկերներով, երկարութիւնը 24 վերջով, լայնութիւնը 16 վերջով: Պատկերների վերնագիրը լինելու է երեք լեզուով, ռուսերեն, ֆրանսերեն, հայերեն: Ընդունել ենք պարսկերեն օգնութիւն հասցնել տպագրութեան ծախսերին:

Ընդունվում է բաժանորդագրութիւնը մինչեւ այս տեսնել 1 րուրի ճանապարհամասով: Գիրք եւ պատկերը այս տեսնելուց յետոյ 2 ր.: Հասցեն՝ Тифлисъ А. Аваковъ. 2—3

Պ Ե Ա Տ Ի Գ Օ Ր Ս Կ

ԲԺ. ՎԱՀ. ԱՐԾՐՈՒՆԻՆ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՄՆԻՄԱՆՈՑ

ՄԱՍՆԱԳԻՏԱՐ

ԲԳԻ, ԿՈՂՈՐԻԻ, ԳԹԻ ԵՒ ԱԿԱՆՔԻ

հիւանդների բնորոշվում են առաւ. ժամը 8—12. Հասցեն՝ Нижний бульваръ, д. Фидлера. (площадь армянск. церкви.) 6—10

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՄԵՆԱԿ

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ

(Посредникъ)

Դ. Ի. ԵՆԱՐՄՈՎԻՉԻ

Պուշկինեան պատած, Թամարեւի քաղաքային հանդէպ:

Հրաւիրում է պ. պ. տանտէրերին հաղորդել մանրամասն հասցէ ազատ բնակարանների (չորս համար վերցնվում է 20 կոպ.), որ շատ դուրսիւն կը պատճառէ թէ տանտէրերին եւ թէ բնակարան վարձողներին Այդ նպատակով պատրաստված է մանրամասն ցուցակ: Գրասենակում կայ ազատ բնակարանների մեծ ցուցակ: Ցանկացողները թող դիմեն գրասենակ: № 1. 0—40

ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵՋՈՒ

Մ. ՄՈՐԻՏՏԻ, վերադառնալով թիֆլիս, վերանորոգել իր գասերը. աւանդում է ռուսաց, ֆրանսիական եւ գերմանական մեթոդով. 2—4 աշակերտի միասին մեծ դիմում կը լինի: Տեսնել կարելի է 2—4 ժամը: Мадатовская—4. 3—5

ՄԻ ՀԱՅ ՎԱՐԺՈՒՀԻ

որ լաւ գիտէ ռուսերեն եւ ֆրանսերեն թէ տեւականապէս եւ թէ գործնականապէս, կամենում է մի դատ ունենալ Արաթութեանում կամ որ եւ է ծովափնայ ամառանոցում: Հասցեն Садовая № 44. кв. Варшавова.

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

հրաւիրում է այն անձանց, որոնք կամենում են յանձն առնել քարէ աշխատանքներ կատարելու կապալը: Պուշկինեան փողոցի վրա գտնվող Կրեդիտային Ընկերութեան նոր շինութիւնը կառուցանելու ժամանակ, տալ դրա մասին դրաւոր յայտարարութիւններ Ընկերութեան վարչութեան եւ դրա հետ միասին ներկայացնել գրաւական գրաւական մէկ հազար ռուբլու չափով, ոչ ուշ այս յունիսի 14-ից, ցերեկվայ 12 ժամին:

Աշխատանքներ կատարելու պայմանները, նոյնպէս եւ կառուցանելի շինութեան յաւանաւորեան 10 ժամից մինչեւ 1 ժամը կէսօրից յետոյ:

Կապալի հաստատումը կախված կը լինի Ընկերութեան վարչութեան հայեցողութիւնից, որը կապալը կը տալ այն անձին, որն աւելի յուսադի կը լինի վարչութեան վճիռն այս հարցը վերաբերմամբ կը յայտարարվի ցերեկվայ 12 ժամին, առի յունիսի 17-ին, իսկ մինչեւ այդ ժամանակ ներկայացրած գրաւականները կը բռնվեն Ընկերութեան կատարում: 1—3

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՍՈՒՆՈՑՈՒՄ

վաճառվում են հետեւեալ նոր գրքերը

Ա Ր Ը Ր Ո Ն Ի Վ. 1) Սիֆիլիս, 2) Կակուղ շանկը, 3) Սուսուեակ, Թիֆլիս, 1900, գ. 25 կ.:
Բ ի Վ ա ն դ ա յ Ի Ն. Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնը գիրք Մակարայեւսկոյ Եւթաղ Աղէքսանդրայի, Ազաթանդեղոս եւ Փաւստոս Բուզանդ: Տիֆլիս, 1900, գ. 1 ր. 50 կ.:

Գ Ե Ռ Գ Ե Ա Ն Բ. Վրդ., Խորենացու Խորենացու պէտք է հաւանալ, Վրդ., 1899, գ. 50 կ.:
Թ ա ո յ Ե Ա Ն Ս., Հայ փողոցի արհեստագործութիւնը, Թիֆլիս, 1898, գ. 40 կ.:

Ը ն տ ա ն ի ի կ ի ն Ն Ե Ր, Բագու, 1899 թ., գ. 20 կ.:

Ո լ ա յ ա, Խղճով դատաստան, Թիֆլիս, 1900, գ. 5 կ.:

Ա կ տ է ա, պատմական վէպ, Թիֆլիս, գ. 50 կ.:

Հ կ ո լ Վ Է, Բարդախոսութիւն գլխանաց, Կ. Պոլիս, գ. 1 ր. 20 կ.:

Կ ո մ Ե Ր, Խնամատարութիւն երեխայից, մարմնական եւ բարոյական, Պետերբ., գ. 60 կ.:

Չ ճ ա տ է ի տ ը ի ժ ա տ ի ն ղ ր, պատկերազարդ վէպ, Տիֆլիս, գ. 1 ր.:

Ցանկացողները կարող են ստանալ նոյն գրքերը եւ կազմած: Դիմել՝ Тифлисъ, Центральная Книжная Торговля. (п) 2—3



ՎԻԵՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՂԵՔԱՆԴՐ ԽՈՒԴԱԿԵՐԴԵԱՆԻ

Գործ. պրոսպ., առաջին գլխավորային հանդէպ, տ. Բաշուէթի ս. Գէորգ եկեղեցու մօտ:

Ստացել ենք ՄԵԺԱ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ տ զ ա մ ա Ր դ կ ա ն ց թէ եւրօպական եւ թէ ֆորմենի—աշակերտական ՊԱՏՐԱՍԻ ՀԱԳՈՒՍՏ. ՆԵՐ: Ձիջումներ ենք անում գլխավորների եւ միջնակարգ դպրոցների ՔՐԱՆՆԱԿՐԸ ԸՇԽԱՐԽՆԵՐԻՆ, նշանակված գներից 10%:

Ընդունում ենք ամեն տեսակ պատուէրներ

տղամարդկանց եւ ֆորմենի, զանազան դպրոցների եւ նոյնպէս աւսուրական ուսումնարանի (коммерческое училище) աշակերտների համար:

3—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C^{ie}

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթ մի անգամ:

Եւ հալոսալը՝ Բաթումից Մարսել, մանկով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 7/20 յունիսի ՄԻՆԴՐԵԼԻ չորեքշաբթի, նաւապետ ՇԻԼՏ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոնակներ արվում են սովորականից պակաս գներով:


Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտիպեդէի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ուսանալու համար թող բարեհաճեն դիմել Ընկերութեան գործակալներին:

ԲԱԹՈՒՄԻՄ—պ. Վիկտոր ԳՆՐԵՍԻՆ, Նաբէրէժնայա ԹիֆլիսիՄՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեան, Սիմի փող. Խոջափառութիւնի եւ Մայսուրաձէի քաղաքապետ ԲԱԳՈՒ—Լոր. Վ. եւ Բ. Մուլաֆեանների, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասնիկովի, № 27: ՆՕՎՈՐՈՒՄՈՒՄ—Վաղիկալակի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (ե. հ. չ.) 12—20

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

հրաւիրում է այն անձանց, որոնք ցանկանում են վերցնել կապալով, երեք տարով, Խուզադէանի նախկին քաղաքապետի քաղաքում՝ ներկայանալ յունիսի 13-ին, երեկոյան ժամի 8-ին, վարչութեան գրասենակը: Ընդունվում են եւ կազմած ծրարներ Պայմանների մասին կարելի է տեղեկանալ ամեն օր, առաւօտեան 11-ից մինչեւ ժամը 1-ը վարչութեան գրասենակում, Արմանսկի քաղաք, տուն Կրեդիտային Ընկերութեան: 5—10



Հ. ԽԱՆ-ԱԶԵԱՆՑԻ

աւտո էլէկտրոք գիշեր-ցերեկ ԻՆՔՆ ԻՐԱՆ ջուր է բարձրացնում ցածր տեղերից վերեւ: Դիմել՝ Л. Ханъ-Агову, Тифлисъ, Великокняжеская ул., 37.

Լ. ԽԱՆ-ԱԶԵԱՆՑԻ

Գիւղատնտեսական մեքենաներ 250 նկարով. վաճառականների մօտ 50 կոպէկ: 16—30